ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2018 թ. հուլիսի 18 N 80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 17-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով. **կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2018 թվականի փետրվարի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներից մարզի համայնքներում համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում հանձնաժողովի անդամներ նշանակելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 1-ի N 114-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 17-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

   1) <<Տիգրանուհի Հովսեփյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության առաջատար մասնագետ>> բառերը փոխարինել <<Գարեգին Ոսկանյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական>> բառերով,

   2) <<Հովհաննես Ասատրյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար>> բառերը փոխարինել <<Հովհաննես Ասատրյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ>> բառերով,

   3) <<Սիրազնիկ Հովսեփյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական>> բառերը փոխարինել <<Սիրազնիկ Հովսեփյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական>> բառերով:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ